Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՕՖԵԼՅԱ ԶԱՔԱՐՅԱՆԻ Ք. ԿՈՊԵՆՀԱԳԵՆ (ԴԱՆԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Քաղաքացիական ծառայողի անունը, ազգանունը. Օֆելյա Զաքարյան

2. Զբաղեցրած պաշտոնը. ՀՀ գիտության կոմիտեի գիտության քաղաքականության վարչության գիտության քաղաքականության և զարգացման ծրագրերի բաժնի ավագ մասնագետ

3. Գործուղման վայրը և ժամկետները. Դանիայի Թագավորություն, ք. Կոպենհագեն, 2-5 մայիսի, 2023 թվական

4. Հրավիրող կողմը. Դանիայի Բարձրագույն կրթության և գիտության գործակալություն

5. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը). Մասնակցություն ԵՄ «Հորիզոն Եվրոպա» ծրագրի շրջանակներում իրականացվող «Մարի Սկլոդովսկա-Կյուրի գործողություններ» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրավական և ֆինանսական հարցերի վերաբերյալ ազգային կոնտակտային անձանց համար անցկացվելիք վերապատրաստման դասընթացին

6. Քննարկված թեմաները.

- Ծրագրի շրջանակներում իրականացվող դոկտորական ու հետդոկտորական կրթաթոշակների տրամադրման սկզբունքները, նախապայմանները և տարատեսակները, ինչպես նաև Կոպենհագենի համալսարանի առկա փորձը և ցուցաբերած հաջողությունները Ծրագրի իրականացման ոլորտում,
- Ծրագրի ֆինանսական հարցերը, մասնավորապես, ծախսային ուղղությունները, այդ թվում, ներառված հետազոտողներին տրամադրվող ֆինանսական միջոցների՝ կեցության, հետազոտողների ընտանիքի անդամների, երկարաժամկետ արձակուրդի համար տրամադրվող ֆինանսական միջոցների վերլուծությունը,

- դոկտորական ու հետդոկտորական կրթաթոշակների շրջանակներում ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների կազմման առանձնահատկությունները,
- Ծրագրի իրավական առանձնահատկությունները, մասնավորապես, մասնավոր սեփականության իրավունքի պահպանման կարևորությունը և Ծրագրի շրջանակներում իրականացվող նախագծերում դրա կիրառման մեթոդները,
- ԵՄ կողմից ֆինանսավորվող նախագծերի շրջանակներում կնքվող հիմնական համաձայնագրերի, կոնսորցիում համաձայնագրերի ու համագործակցության համաձայնագրերի սահմանումը, էությունը և իրավական առանձնահատկությունները,
- Ծրագրի շրջանակներում Ազգային կոնտակտային անձանց կողմից ծավալվող գործունեությունը և այս ոլորտում Դանիայի, մասնավորապես, Կոպենհագենի համալսարանի փորձը

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Այցի ընթացքում ծանոթացել եմ Ծրագրի շրջանակներում հետազոտողներին տրամադրվող դրամաշնորհների տարատեսակներին, սկզբունքներին, նախապայմաններին, Ծրագրի ֆինանսական հարցերին, մասնավորապես, ծախսային ուղղություններին, այդ թվում, ներառված հետազոտողներին տրամադրվող ֆինանսական միջոցների՝ կեցության, հետազոտողների ընտանիքի անդամների, երկարաժամկետ արձակուրդի համար տրամադրվող ֆինանսական միջոցների վերլուծությունը, Ծրագրի իրավական առանձնահատկություններին, մասնավորապես, մասնավոր սեփականության իրավունքի պահպանման կարևորությանը և Ծրագրի շրջանակներում իրականացվող նախագծերում դրա կիրառման մեթոդներին, հիմնական համաձայնագրերի, կոնսորցիում համաձայնագրերի ու համագործակցության համաձայնագրերի էությանը և իրավական առանձնահատկություններին:

Կոպենհագենի համալսարանում ծանոթացել եմ «Մարի Սկլոդովսկա-Կյուրի գործողություններ» ծրագրի Ազգային կոնտակտային անձանց ցանցին, վերջիններիս կողմից իրականացվող խորհրդատվական և տեղեկատվական բնույթի

միջոցառումներին, ինչպես նաև Կոպենհագենի համալսարանի Ծրագրի իրականացման ոլորտում առկա փորձին և ցուցաբերած հաջողություններին:

8.Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Պայմանավորվածություն է ձեռք բերվել աշխատանքային կարգով շարունակել շփումները «Մարի Սկլոդովսկա-Կյուրի գործողություններ» ծրագրի Ազգային կոնտակտային անձանց ցանցի մյուս անդամների հետ փորձի փոխանակման նպատակով: Ձեռք բերված գիտելիքի և փորձի հիման վրա «Մարի Սկլոդովսկա-Կյուրի գործողություններ» ծրագրի շահառուներին տրամադրել խորհրդատվական աջակցություն դրամաշնորհային ծրագրերին դիմելու գործընթացի, հայտադիմումների կառուցվածքի և տեխնիկական բովանդակության, դրամաշնորհների բյուջեի նախանշման, հայտադիմումների ադմինիստրատիվ փաստաթղթերի լրացման ու ներկայացման գործընթացի վերաբերյալ: Միաժամանակ, ՀՀ գիտության կոմիտեի պաշտոնական կայքէջում և այլ սոցիալական հարթակներում պարբերաբար տեղադրել Ծրագրի, ինչպես նաև Ծրագրի շրջանակներում տրամադրվող դրամաշնորհների վերաբերյալ տեղեկատվություն:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Քննարկվել է Հայաստանում «Մարի Սկլոդովսկա-Կյուրի գործողություններ» ծրագրի շրջանակներում տրամադրվող դրամաշնորհների վերաբերյալ իրազեկվածության և մասնակցության խթանմանն ուղղված միջոցառումները, ինչպես նաև դրանց իրականացման գործում Ազգային կոնտակտային անձանց ակտիվ ներգրավվածության հարցը:

10 մայիսի, 2023 թվական

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԲԱԺՆԻ ԱՎԱԳ ՄԱՍՆԱԳԵՏ՝

ՕՖԵԼՅԱ ԶԱՔԱՐՅԱՆ